

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարւանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:

(Պարագրաֆայի գիմում են ուղղակի
Тифлису. Редакция „Мусах“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԵԼԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չենք հաւատում:—Ներքին տեսութիւն: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Բարենորոգումներ: Ի փոքր-Ասիա:—Վշակիտ հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Նամակ Թիֆլիսայից:

ՉԵՆՔ ՀԱՒԱՏՈՒՄ

III

Հայերը սովոր են միշտ գործածել բառեր, առանց նրանց բուն իմաստը կշռելու և հասկանալու:

Ամեն օր մենք լսում ենք այսպիսի խօսքեր՝ հայոց ազգ, հայ ազգութիւն, հայոց ազգային դրօշներ, հայոց լրագրութիւն, և Պոլսի հայոց ազգային ժողով հայոց ընկերութիւններ...

Կամ այսպիսի խօսքեր՝ հայոց ազգի ապագան, Հայաստան, հայոց խնդիր, հայոց ազգի կրթութեան գործ... Հայաստանի մէջ ուսման ծաւալելը... և այլն:

Բայց ի՞նչ են նշանակում այս բոլոր խօսքերը...

Այդ բոլոր խօսքերը նշանակում են՝ լուսաւորչական հայոց ազգ, լուսաւորչական հայերի ազ-

գային դպրոց, լուսաւորչական հայերի, կրօնական և ոչ թէ ազգային ժողով, լուսաւորչական հայերի համար հիմնած ընկերութիւններ... Ի՞նչ է նշանակում հայոց ազգի ապագան, — դա նշանակում է լուսաւորչական հայերի ապագան: Հայաստանը նշանակում է միմիայն լուսաւորչական հայերով բնակված Հայաստան: Հայոց խնդիր չէ նշանակում բոլոր հայերի՝ լուսաւորչականների, կաթօլիկների և բողոքականների խնդիր, — այլ միմիայն լուսաւորչականների խնդիր: Հայաստանի մէջ մտնելի բարենորոգումները նոյնպէս վերաբերվում են միմիայն լուսաւորչական հայերին... և այլն:

Այդ բոլոր բառերի մէջ ուրեմն ոչինչ ազգային գաղափար չը կայ, այլ կան միմիայն կրօնական, ազանդական գաղափարներ: Ազգ, ազգային՝ գործ է անվում մեզանում միմիայն որպէս գիմակ մեր ազանդական, սեկտական նեղ, սահմանափակ զգացմունքը և մոլեռանդութիւնը ծածկելու համար:

Եթէ նախի փաստարանութեան ձեւն մէջ մի նորութիւն կայ, որում աշխարհն անդիմապէս էր մինչև ցարդ:

Բայց աւելի զարմանալին այն է, որ այդ լրագիրն ամենին աւելի կարեւորութիւն ունէր, քան զլրագիր և օրինակացը թուի: Բարձրագոյն Գուռի պաշտօնեայք, թրքերէն լաւ օրագրաց չորութեան մէջ, ստիպուած էին հայերէն ընթերցանութիւնը ուսանիլ հայ խմբագրապետաց հայատառ և թրքերէն լեզուաւ հրատարակած լրագիրները կարդալու համար: Թէր ճէմանը Էֆէն արը, զոր հայերը կը գրեն տաճկախօս հայոց համար ամեն թուրք պաշտօնեայի մօտ հնար է գտնել:

Հրապարակախօսութիւն բառը տաճկաց բառաբանին մէջ չը կայ: Հայերը, յոյները մասնաւոր լատիններ, մասնաւոր ժողովարաններ ունին, ուր գիտականը, բժշկիչը, մատենադիրը կը գտնուէր: Մասնաւոր նիւթի մը վրայ ծառայ և գիտութիւնն այսպէս կընդհանրացնէ, կը ռամկացնէ (vulgariser): Տեսնուած բան չէ տակաւն որ թրքերն այդ նպատակով մի տեղ գումարուած լինին:

Եթէ հարցնէք ինձ՝ ինչ է թուրք գրականութիւնը, պիտի պատասխանեմ կարճ խօսքով թէ ահա գին և ճշմարիտ քառս մ'է, խաւար մ'է: Ամենքին կարծիքով, լաւ գրականութիւն մը ամենագերազանց գործիքն է ազգաց կրթութեան համար, թրքերն, ինչպէս ամեն օգտակար և հարկաւոր բաներէ, նոյնպէս այս երջանկութեան ալ զուրկ են: Թուրք գրականութեան ինչ լինելը հասկանալու համար, պէտք է ըսել չը կայ թուրք գրականութիւն, ըստ որում, տակաւն չէ զարգացած, չունի այն ընդարձակութիւնն որ ամենաաղքատ գրականութիւնը, ինչպէս օրինակ, հայոց աշխարհիկ բարբառը այսօր ստացած է: Թուրք գրականութեան լեզուն, ճշգրտած չը լինելէ ի զատ, այնքան պարսիկ ու արաբ ոճերով և բառերով խճողեալ է, որ հասարակ մի մարդ թրքերէնի ուսման երկար տա-

Մենք չենք կարծում որ հայոց ազգը կարող է ազգութիւն համարվել մինչև որ ազգութեան անդամները միմիայն լուսաւորչականները կը համարվեն: Մենք չենք հաւատում որ հայոց դպրոցները ազգային են, քանի որ նրանց մէջ միմիայն լուսաւորչական մանուկներ են ընդունվում: Չենք հաւատում որ Կ. Պոլսի ազգային ժողովը կարող է թիւրքաց հայերի մէջ ազգային ժողովի պաշտօնը կատարել, քանի որ նրա մէջ ընդունվում են միմիայն լուսաւորչական հայերը, իսկ Հայաստանի, հայոց ազգի միւս մասերի ներկայացուցիչները, հայ կաթօլիկները, հայ բողոքականները և նոյնպէս հայ մահմետականները մուտք չունեն նրա մէջ: Դա ուրեմն միայն մի կրօնական ժողով է, աւելի ոչ չին: Եթէ թիւրքաց Հայաստանը մի ամբողջութիւն, պետութեան մի նահանգ է կազմում, — հայոց ազգային ժողովը պէտք է պարունակի այդ նահանգի հայ ազգաբնակչութեան անխտիր բոլոր դաւանութիւնների ներկայացուցիչները և ոչ թէ բաղկանայ

ընկեր կիթ չէ զոհած, մի գրուած իմանալու բոլորովն անկարող է:

Հասկա տաւորը կարգալու ահագին զգեստաւորութիւնը: Ես պիտի ըսեմ թէ արաբական տաւորը մի պատուհան են, որով Աստուած ուզեր է մշտնջենաւոր պատկեր իսկանները: Թերեւ չափազանցութիւն չը լինէր ըսել թէ արաբերէն տաւորը այլ բանաւոր մը սկսնակ աշակերտին վրա այն յուսահատութիւն կը բերէ, ինչ յուսահատութիւն որ վաղայ քնեաւորներն ու Նիզամիի ինչ ուղիքները ներքէ գիտականաց արտին մէջ կը չնչնէ: Եւ երբ ի միտ բերէք թէ այդ թուրք լեզուն, համարապահ (synthétique) իսկապէս շարադասական է, և չունի այն ճկունութիւնն, այն դիւրաբեկութիւնն որ վերլուծական (analytique) լեզուաց առաւելութիւններն են, այն առեւ պիտի ըմբռնէք, թէ թրքերէն լեզուաւ, չստ չստ, օգային թիւթիկ բանաստեղծութիւններ հնար է գրել, և թէ բնագէտ մը, թուրքաբան մը, փիլիսոփայ մը, օրէնսդիր մը որք ճշտուած և ճօն ու վերլուծական լեզուի պէտք ունեն գաղափարաց ամեն աղօտ երանքները արտայայտելու համար, երբէք չը պիտի կարենան ամեն ինչ բացատրել այդ թրքերէնով: Աշխարհն արարել պիտի ապրի, բայց թրքերէն լեզուաւ հեղինակուած մի ուսումնական գիրք չը պիտի տեսնէ:

Կարեօք է գիտնալ թէ Եւրօպայի մէջ սկսուած փիլիսոփայական, կրօնական, ուսումնական ահագին շարժումը չը զգրեց փոքր ինչ թրքերն ալ: Բայց որ լաւ բանէն օգուտ քաղել են, որ մեք ալ հաւատանք, թէ այդ շարժումն օգտուելու աշխատած են: Երեցաւ, այդ, մի երկու մարդ որք ընդհանուր թմբկերէն սթապակով մի քիչ նոր օգիտութիւններ: Միւսիք է Էֆ., որ այսօր հասարակաց կըրթութեան պաշտօնեայ է, ձեռնարկեց թարգմանել Վոլթերի մի քանի իմաստասիրական հատուածները: Ոճովն ու բառերովն այնքան անխմայել է այդ թարգմանութիւնն, որ սակաւթիւ գնող-

միմիայն ազգի մի դաւանութեանը պատկանող անդամներից:

Վերջապէս չենք հաւատում որ մի ընկերութիւն, որի նպատակն է ծաւալել ուսումը Հայաստանում, կարող է կատարեալ աշուղութիւն ունենալ, կատարեալպէս օգուտ բերել ազգին, կարող է ամբողջ ազգի կատարեալ համակրութիւնը և հաւատարմութիւնը վայելել, չենք հաւատում որ այդ ընկերութիւնը կարող է ամբողջ ազգից դրամական օժանդակութիւն ստանալ — եթէ նա աչքի առաջ ունի ազգի մի մասը միայն, նպատակ ունի ազգի մի դաւանութեան պատկանող անդամների մանուկների մէջ միայն ուսում տարածելու, անտես անելով ազգի միւս մասերը, չը հոգալով միւս դաւանութիւններին պատկանող մանուկների կրթութեան մասին...

Բայց այսպէս են գործում մեր ազգային բոլոր գործիչները, այսպէս է գործում «Նորաստեան» ընկերութիւնը:

Հայաստանը բացի հայ-լուսաւորչականներից ունի հայ-կաթօլիկ, հայ-բողոքական և հայ-մահ-

մետներն ալ իրենց դարմանի մէկ անկիւնը կը պահեն զայն: Անշուշտ լաւագոյն բաղդի մ'արժանի չէր: Միւս կողմէն, նախկին մոլայ, որ մի շատ երազատեաներու պէս, օտմանեան ազգ մը ստեղծել կը յուսար, երբ տակաւն զօրապետ չեղած Շիրազի ապաւանդեալ վրայ 15—20 հազար խաւամ չէր կոտորած, փիլիսոփայական մարմանը մը զգալով, եւա թրքաց մէջ Դարուինի գաղափարները տարածել և հրատարակել տեսալի, զոր թարգմանաբար երկապիթեր էր: Ահա այս նշաններով միայն յայտնվեցաւ թրքի մէջ տեղի ունեցած փիլիսոփայական շարժումը: Ինչպէս որ տեսնէք, շատ ողորմելի բաներ են:

Թրքաց մտաւորական կեանքին ամենահամառօտ այս նկարագիրն յետոյ, պէտք չէ սպասել նրա պատմութիւնը մի խօսք իրենց վարժարաններուն և դասատուաց մարմնոյն մասին: Մոլայները այսինքն, անոնք որ փիլիսոփայական գաղափարները փութանով կը բացատրեն, պաշտօն ստացած են օգիտութեան խաւարը փարատել և լոյս ու կըրթութիւն արձակել: Դաստիարակութիւնն իսկապէս կրօնական է, այնպէս որ փութանին, այդ կրօնական հատուածակողմին (prisme) միջէն պէտք է որ աշակերտը նկարէ ամեն փիլիսոփայական և քիմիական երեւոյթները (phenomène)-ները: Չարմանալի մի բան չէ որ ամբողջ իսկանաց մէջ, թրքերն են միայն որ փութանէն մէկ մատնաչափ չեղիլ չեն կամենար: Սկզբանէ ի վեր, արաբները, ազգ նրբամիտ և հանճարեղ, և պարսիկները, յեղափոխելու բողոք փորձած են մահմետականութեանց դէմ: Երբ որ խալիֆ աշխարհին կառավարութիւնն ևս արաբացոյց ձեռքն էր, գիտութիւն և փիլիսոփայութիւնն կը ծաղկէին ամեն կենտրոնաբար մէջ: Պաղատաւ Միջագետքին մէջ, Կորտովա Սպանիոյ մէջ, ամեն մակացութեանց մէկ մէկ ապաստանաբան էին: Կորտովա, նամանաւոր գիտութեանց ազատ մշակութիւնն այնքան յառաջա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՏԱԹԻՒՆՈՒՅԻՑ

Կ. Պոլս, 3 սեպտ. 79

Թիւրք շատ անտարբեր է դէպի լրագրութիւն և մի բարձրաստիճան անձ վայելուչ չը համարէր իր վիճակին լրագրութեան արուեստը: Կ. Պոլսի մէջ լոյս տեսած մէկ քանի թերթերը, մի կարծէք թէ, թուրք խմբագրապետներ ունեն: Ճերիտ էի Հաւատալի՝ որ այդ հրատարակութեանց ամենահինն է՝ խմբագրապետը յոյն է: Վաղ թրքալիքներ մի փոքրամակերտցի հայ, էլ ճէմալայի ինչ մի արաբ, Թէր ճէմանը հազի գէթ թիւրի մի չէրքեք: Պասիւր է թ անուն մի թուրք լրագիր կար, որու խմբագրապետն էր մի թուրք, Ալի Էֆէնդի: Սա իր անունն անմահացոյց պ. կատարեալի դէմ գրած յօդուածներով, իր միամիտ հայրենակիցները համոզելու համար, թէ պ. կատարեալ Պուլիսաց պաշտպան կը կանգնի արդարասիրութիւնէ և մարդասիրութիւնէ բոլորովն տարբեր մի պատճառի համար, կեղծ մի օր կը հրատարակէ, թէ պ. կատարեալ մի պուլիսի օրագրի է, որ իր մանկութեան ժամանակ, Պաղքանի լեռանց ստորոտը խոզ և ուլիար կարածէր, և բախտին բերմամբ Անգլիա գնալով, անդ երեսփոխան կընտրուի խորհրդարանին: Մի թուրք խմբագիր չէր կրնար աւելի համոզիլ և հոգր փաստ գտնել պ. կատարեալի պուլիսիականութիւնը բացատրելու համար, և մենք ալ պէտք է խոստովանենք, որ Ալի

մեռական ազգաբնակչութիւն: Մի-
թէ նրանք բոլորը հայեր չեն: Ա-
սենք թէ թիւը պէտք է տեղադրուի
չի թոյլ տայ հայ մահմեդական-
ների համար հայոց լեզուով դըպ-
րոցներ հիմնելու, կամ նրանց հա-
յոց դպրոցներն ընդունելու: Բայց
Հայաստանի ազգաբնակչութեան
մի երրորդականը կաթոլիկ է և
հայերի մէջ բազմաթիւ բողոքա-
կաններ էլ կան:

«Արարատեան» ընկերութիւնը,
ինչպէս և մեր միւս բոլոր հասա-
րակական գործիչները, մոռանում
է կաթոլիկ և բողոքական հայերի
գոյութեան մասին: Նրա կանո-
նադրութեան մէջ մի խօսք ան-
գամ ասված չէ թէ ուսումը
պէտք է ծաւալվի Հայաստանի
ամբողջ ազգաբնակչութեան մէջ
առանց խտրութիւն դնելու հայ
մանուկների դաւանութեան մէջ:

Ուրեմն և «Արարատեան» ըն-
կերութեան կարծիքով Հայաս-
տանում ուսում տարածել նշա-
նակում է ուսում տարածել մի-
միայն հայ-լուսաւորչականների շը-
ջանում: Իսկ Ա. ասպետականի հայ-
բողոքականները, կամ Խոտորչուրի
ու Օէյթուրի կաթոլիկ հայերը,
նրա կարծիքով հայեր չեն....

Բայց որքան աւելի այդ կունե-
նայ «Արարատեան» ընկերութեան
պէս մի ընկերութիւն, եթէ ան-
խտիր հոգար ամեն դաւանութեան
պատկանող հայ ազգաբնակչու-
թեան մանուկների ուսման մա-
սին: Որքան աւելի համակրութիւն
կը վայելէր նա, որքան աւելի նիւ-

թական օժանդակութիւն կըս-
տանար նա....

Նկատեա՛մ այն ժամանակ «Ա-
րարատեան» ընկերութիւնը կա-
րող էր, միանալով միւս ընկերու-
թիւնների հետ և կազմելով մի
զօրեղ ընկերական մարմին, դնել
իրան օտար պետութիւնների դե-
պանատների հովանաւորութեան
տակ: Այն ժամանակ ամեն մի
դեսպան կը հովանաւորէր այդ
տեսակ ընկերութեանը, որովհետեւ
կը տեսնէր իր պետութեան շահը,
ին տեսնէր իր պետութեան մէջ:
Կաթոլիկ պետութիւնը կը հովանաւորէր,
որովհետեւ ընկերութեան մէջ կը
տեսնէր հայ-կաթոլիկ ներկայա-
ցուցիչներին, բողոքական պետու-
թիւնը կը տար իր հովանաւորու-
թիւնը, որովհետեւ բողոքականնե-
րը միացած կը լինէին ընկերու-
թեան հետ:

Մեզ կասեն որ այդ հովանա-
ւորութիւնները կարող են փասա-
կար լինել թիւրքաց հայերի ներ-
քին, ազգային գործունէութեան
մէջ.... Համաձայն ենք: Թող չը
որոնեն թիւրքաց հայերը այդ տե-
սակ փասակար հովանաւորու-
թիւնները, բայց միացնելով մի
ընկերութեան մէջ լուսաւորչական
բողոքական և կաթոլիկ հայերի
ոյժերը, առանց օտար պետու-
թիւնների որ և է հովանաւորու-
թիւն էլ որոնելու, որքան աւելի
ուժեղ համակրելի, պատկարելի,
նշանաւոր, անգամ սպանալի կե-
րեւար և կը լինէր «Արարատեան»
ընկերութիւնը, քան թէ այժմ,

երբ նա համարվում է հայոց ազ-
գի մի մասի, միմիայն լուսաւոր-
չական հայերի ներկայացուցիչ....

Նրբի «Արարատեան» ընկերու-
թիւնը չէ հրաժարվում մի հայ-
բողոքականի կամ հայ-կաթոլիկի
ձեռքից փողերը ընդունելուց, չէ
մերժում նրանց նուէրները,—ու-
րեմն ի՞նչի նոյնպէս չէ նուիրում
իր ոյժերը բողոքական և կաթո-
լիկ հայ մանուկների մէջ ուսման
տարածելուն....

Մենք մինչև այն ժամանակ
«Արարատեան» ընկերութիւնը կա-
տարեւապէս ազգային ընկերու-
թիւն չենք համարի, որ նուիրում
է իրան Հայաստանի մէջ ուսում
ծաւալելուն, մինչև որ նա չընդունի
իր անդամների և վարչութեան
մէջ անխտիր լուսաւորչական, բո-
ղոքական և կաթոլիկ հայերին,
մինչև որ նա նոյնպէս չը դիմի
կաթոլիկ և բողոքական հայ հո-
գեւորականութեան հովանաւորու-
թեանը, ինչպէս դիմել է Ա. Պօլ-
սի հայ-լուսաւորչական Ներսէս
պատրիարքի հովանաւորութեանը,
մինչև որ նա լուսաւորչականների
հետ հաւասարապէս չը հոգայ և
Հայաստանի բողոքական և կաթո-
լիկ հայ մանուկների կրթութեան
գործի մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուսւմ ենք, որ ՆՈՒԹԻՒՆ հոգեւոր դպրոցը արդէն
փակվել է տէր Ս. քահանայի և տեղական առաջ-
նորդի խնդրանքով: Ուսումնարանի խեղճ երե-
խայքը մնացել են փողոցներում թափառելով, մեծ
յուսահատութիւն բերելով ծնողների վրա: Սպա-
սում ենք մանրամասն տեղեկութիւններին:

Պ. Արքէն Մեկքեանը ուղարկեց մեզ ՄՕՍԿԱ-
ՅՈՅ 12 ր. հետեւեալ նամակի հետ. «Թողովքով մի
քանի ընկերներից յօգուտ «Արարատեան» ընկե-
րութեան 12 բուլլ, անա ուղարկում եմ ձեզ և
խնդրում եմ հասցնել վերոյիշեալ ընկերութեանը:

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Որքան մեծ էր
Ա. ԲԱՍՄԱՆԻՍԻՍԻ հայ հասարակութեան համա-
կրթութիւնը դէպի պ. Ա. Բաբայանի հրապարա-
կական դաստիարակութիւնները, այնքան սովաւ էր
ուսու հասարակութեան կողմից, չը նայելով ուսու
աստիճանաւորների և ուսումնականների ջնքմ
ցանկութեանը, որ դաստիարակութիւնը ուսուներէն
էլ կարգաւորէր: Ուսուներէն դաստիարակութեան ար-
դիւնքը նշանակված է յօգուտ Ալեքսանդրապոլում
նոր բացվելի թէպէտ և ուսումնարանի: Պ. Ա.
Բաբայանը 1873 թուին էլ փորձեց Ալեքսանդ-
րապոլում դաստիարակութիւն կարգաւ: Այն ժամա-
նակ ուսու հասարակութիւնը աւելի համակրու-
թեամբ վերաբերվեց գործին, իսկ հայերը չէին
կամենում թողնել կանաչ սեղանը և լսել դասա-
խօսին: Յաւալ է, որ մի քանի արդիւնքով
պատճառներով պ. Բաբայանը չը կարողացաւ
կատարել իր խոստումը և Ախալքալաքում էլ
կարող էր դաստիարակութիւնը, որը չուտով կը
հրատարակվի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՆԵՆՈՐԴՄԱՆՆԵՐ Ի ՓՈԲԵՐ-ԱՍԽԱ

Ահաւասիկ Փոքր-Ասիոյ բարեկեցութեան
խնդրին վրա Թայմիլ հրատարակած խմբա-
գրական երկրորդ յօդուածը, զոր վերը յիշե-
ցինք, և որ յիշեալ լրագրին օգոստ. 16 թիւ
թերթին մէջ հրատարակուած է:

«Աւրջին պատերազմին պատճառաւ արդե-
ն»

ցած էր, որ դժուար չէր տեսնել մի և
նոյն դպրոցին մէջ հրէայ, աղանիւսցի աշա-
կերներն արաբացուց հետ: Գաղթիւններն ալ
մասնաւոր համակրութեամբ այս ազատամիտ բար-
բերը կը քաջաբերէին և եղաւ ժամանակ, որ գի-
տութիւնն և կրօնական ազատութիւնն ամբողջ
քրիստոնեայ ազգիւնն հալածուելով մահմեդական
աշխարհին մէջ միայն պաշտպանութիւն կը գտնէին:
Ավիստանները, Ավերստանները, Ֆրատիկները, մինչև
ցարը կը յիշուին յարգանքով իւր առաջին կարգի
թիւիւններ, փիլիսոփայներ, աշխարհագրագետներ: Ավեր-
ստան, որ Արիստոթելի փիլիսոփայութիւնը թարգմա-
նեց, և Եւրոպայի գիտնականը առաջին անգամ
այդ արարեղէն թարգմանութիւնէն յոյն խմատա-
սիրութեան վրա տեղեկացան, այնքան բարձր հե-
ղինակութիւն մ' ունէր, որ իր վարդապետութիւնը
մի առանձին փիլիսոփայական դպրոց կազմեցին,
և խոսքով բոլոր համալսարանաց, նամանաւնդ
Ֆրանկոնիայի մէջ, ինչպէս նաև ի Գաղղիա, բազմա-
թիւ աշակերտներ, հետեւողներ ունեցաւ: Բայց,
ինչպէս որ կըսէ արեւելագէտ անուանի Էռնէստ
Ռենան, կըր իսլամ աշխարհին կառավարութիւնն
արար գաղթներուն ձեռքէն յափշտակուելով անցաւ
թրքաց ձեռքին մէջ, այդ բարբարոս հրոսակին, որ
Թիւրքիստանի խորքէն արշաւելով եկել էր Մի-
ջագետի մէջ կազմել մի պահապան բանակ դա-
ւիթներուն շուրջը, այն ատեն ամեն գիտութեանց
վաւարանները մարցան, գրատունները գոյուեցան,
ուսումնականներն քարոտուեցան կանգ առաւ, կա-
նեցաւ ընդհանուր շարժումը, ամեն զք միաբը
մեղակու փոխան, իր մարմնը մարդեց, ջիւղերն
աւարաբնդեց սուլթաններու դրօշակին հետ երկրէ
երկրի ասպատակելու գրոհ տալու համար: Մէկ
խօսքով սուրբ փոխանակեց գրչին: Ահա այս
պատճառաւ իսլամութեան մէջ յառաջ չը գնաց,
պարզաբեր չեղաւ այն յեղափոխութիւնն որ 5—6
դար յետոյ քրիստոնեայ աշխարհին մէջ կատա-

րուելով ընդհանուր մարդկութեան մի նոր դարա-
դուս բացաւ: Թիւրքերն, անընդունակ լինելով փի-
լիսոփայական ճշմարտութիւններն ըմբռնելու, ամ-
բարիւտ համարեցին միշտ որ և է ոչ-կրօնական
զբաղմունք, և իրենց այս բռնապետութեամբ,
խեղդեցին ամեն մտաւորական ազատութիւն և
հուսկ յետոյ իրենց ալ ընկան այն մահաւոր պ թմ
բուլթեան մէջ, ուր 100 տարիէ ի վեր օրհասա-
կան հոգեկտրել պէս մաղթուիւն կը ստեղծան ու կը
հնձնեն:

Մինչ հազար թնամիներ անոր գլխին շուրջը
բոլորած անհամբերութեամբ կը սպասէին ոգին վը-
նելու վարկերանը, պարոն պահպանողական անդ-
ղիացիները դեռ կը պնդէին թէ ճակատտանի մէջ
ազգ կոչուելու արժանի և իբր կառավարող ազգ
ապրելու ընդունակ միայն թուրք տարրը կայ:
Բայց մեղի համար տարակոյտ չը կայ թէ մի ամե-
նաստուար ժամանակում այս հոգեկտրել պիտի
դադրի ապրելէ: Մենք, հայերս, պատրաստ ենք
տիրապետելու այն գոյքերուն, զորս նա մեզմէ
յափշտակած էր իր ամենակարողութեան միջոցին:
Պէտք է համոզուել թէ օտարներն ոչ փափաղ,
ոչ ալ համարձակութիւն չը պիտի դրան, զէնքի
զօրութեամբ իբր ժառանգորդ ներկայանալ այդ
անտէր մնացած երկրներուն, եթէ մենք, նրանց
վերայ մեր սեփականութեան իրաւունքները հա-
տատունք, ոչ թէ ողբերով և բողոքներով միայն,
որ շատ ազդեցիկ միջոցներ չեն, այլ մի այնպիսի
գործունէութեամբ և քաղաքականութեամբ որ հայ
ազգեցեղութիւնը և հայ անունը այդ երկրներուն
մէջ տեսնուի, զգացուի, ամեն մէկ զայի:

Մի ժամանակ կար որ հայոց մեծ մասը, ազգին
վերականգնելէն յոյր բոլորովն կտրած լինելով,
դատարկ և անպէտ մի բան կը համարէր ազգա-
սիրութիւն ունենալ, Հայաստանի վրա մտածել, իր
հայրենակիցներուն յառաջադրան և օգտին աշխատել,
այսօր այդ յուսահատութիւնն ոչ զքի ներքին չէ

ունենալ, այսօր ամեն հայ պէտք է խորին կերպով
հաւատայ թէ իւր հայրենիքը պիտի վերաշինուի,
պիտի ազատի, և իր նախկին փառքը, նախկին
բարեկեցութիւնը, նախկին անունը, վերջապէս,
պիտի ձեռք բերէ, ի միջի միւս ազատ և երջանիկ
ազգաց: Ահեղ դէպքեր, արեւալից պատերազ-
մունք տեղի ունեցան, և փառք ճեռան, հայ ազ-
գայութեան վերակազմուելուն ամենամեծ արգել-
քը, ջղակուտ, անկենդան, գետնին վրայ դիտա-
պատ կը կենայ:—Նա անկարող է այսուհետեւ
խափանել մեր թուիչքը, մեր յառաջադէմ քայլերը:
Հետեւաբար, այն նպատակն որ 10, կամ 5 կամ
3 տարի յառաջ անկարգորդուի, անգործարարուի
կը թւեր, այժմ և այսուհետեւ պէտք է ըմբռնուի
կարծուի իբրեւ իրականաւոր խիստ մօտ և խիստ
հնչու մի նպատակ:

Ոգեւորեցէ՛ք ուրեմն դուք, ամենքդ, վատեալ-
ներ, թերահաւատներ:—Այ ևս արդար չէ, որ դուք,
ճոխ և փաթմա հայազգի վաճառականներ, սե-
ղանաւորներ, անտարբեր մնալ: Թող տուէ՛ք որ
ձեր սրտին մէջ մանկ ազգայնութեան արեւցու-
թիւնն, այն կենդանարար արեւցութիւնն, որ յաւի-
տեանս անմոռանալի բարեգործութիւններ ընել
կուտայ: Գուք, երկտասարդներ, կրկնապատկեցէ՛ք
ձեր եռանդը, ձեր աշխատութիւնը: Գեղեցիկը,
բարին և ճշմարիտը, սիրող եղած է միշտ երկուս-
տարողութիւնն ամեն երկրի մէջ:—Մեր հայ երկուս-
տարողութեան անպատուութիւն կը լինէր կար-
ծելու թէ նա զուրկ է այդ մեծանշան, վե՛մ, անձ-
նագործ զգացումներէ: Գուք ալ, ինչպէս այլ աշ-
խարհներում, փայլեցէ՛ք, դուք և եկէ՛ք այդ մոռա-
ցութեանէն, այդ միջութեանէն ուր մինչև ցարդ ան-
ժանօթ և արտու՛մ մնացել էք: Թիւրքալուս, ձեր
եղբայրները բաւական գործել սկսեւ են, օգնե-
ցէ՛ք նոցա—յորդորեցէ՛ք ժողովուրդն որ օգնէ այն
ընկերութեանց որ Հայաստանում լոյս և ուս-
մանք տարածելու կաշխատեն:

Չը պէտք է կարծել թէ այդ մի քանի ընկերու-
թիւնը, միմիայն փասակար են և ամեն ալ օ-
տար և հարկաւոր չեն: Հայաստան անծայր...
ծաւալ երկրի մ'է, ոչ միայն 3 այլ 10 ընկերու-
թիւն ևս հարկաւոր է, որ մեր հայրենիքի ամեն մի
խորշում հնար լինէր լոյս սփռել: Արարատեանը
վաւարական դաւաճին մէջ գործելով, անկա-
րող պիտի լինի այլ տեղեր իր բազուկը մեկնել,
կառկաւել, ճարձել և Ալաշկերտը, Գալոցասիւրաց
—Արեւելեանի համար արդէն բաւական մի մեծ
դաշտ է, որու մէջ պէտք կար որ առանձին ընկե-
րութիւն մը գործէր—ոչ Արարատեան և ոչ Գըպ-
րոցասիւրաց—Արեւելեան չէին կարող Վիլիւայի
խեղճ ժողովրդին օգնութեան հասնել, և այս
հարկին տակ հիմնուեցաւ Վիլիւայի ընկերութիւնը:
Ուստի, ոչ միւս աւելորդ չէ, եթէ միայն կարող
լինին օր ըստ օր ընդարձակել, բայց այդ ըն-
դարձակութիւնը տեղի չունենար, մինչև որ Ժողո-
վուրդը իր քսակը չը բանայ, իր նուէրը չընծայէ:
Եթէ անշուշտ, ազգայիններն անտարբեր մնան,
եթէ չուզեն հասկանալ այդ ամեն մի ընկերու-
թեան կարեւորութիւնը, այն ատեն, ընկերութիւնը
այլ չը քայքայուելու և իրարմով ապագային ամ-
բացնելու, ապահովելու համար, պիտի ստիպուին
միմայն, վառն զի այն անձինք որ հայրենեաց հա-
մար քրտնք թափել յանձն առած են, նրանք ի-
րենց ճանապարհին կիսուն վերայ չը պիտի ցան-
կան մնան:

Ուստի, ամեն դք, առանց ընկերութեանց թիւն
չիփթուելու, թող շարունակէ պարզեւել իր լուսնայն,
եթէ վաւարականների ազգայնոց կը համակրի,
Արարատեանին, եթէ ճարձել և Ալաշկերտի,
Գալոցասիւրաց—Արեւելեանի և եթէ Վիլիւայի,
Վիլիւայի ընկերութեան:

Հենց

ներն՝ Օսմանեան կառավարութեան հարկաւոր ճանաչած բարենորոգմանց արգելք եղան. բայց յիշեալ կառավարութեան այս նկատմամբ յանձն առած պարտականութեանց ժամանակին զործարդութեամբ կարեւորութեան վրա արդէն պնդած եմ և պիտի շարունակեմ պնդել:»

Փառուհաճ ճառին այս յայտարարութեամբը, (կրտէ Քայմը) կառավարութիւնը Փոքր-Ասիոյ մէջ բարենորոգմանց զործարդութեան նկատմամբ իւր երաշխաւորութիւնն հանդիսապէս կը նորոգէ: Տարակոյս չը կայ որ ճշմարիտ է թէ վերջին պատերազմին աղետները պետութեան ամեն կողմը թուրք վարչութեան դժուարութիւններն աւելցուցին. բայց հաւասարապէս ճշմարիտ և զուգէ ևս առաւել ուղիղ է դիտել որ թուրքիոյ Ներսպական և Ասիական գաւառաց վիճակներն իրարմէ խիստ տարբեր են, և թէ Ռուսական զօրաց ներկայութեանը վրա հիմնեալ յայտարարութիւնը և վարանամտութիւնը կրնան արդարանալ Ներսպական մասին համար, մինչդեռ Ասիական գաւառաց համար այս օրինակ պատճառները խիստ քիչ կարեւորութիւն ունին: Փոքր-Ասիոյ անկարգութիւնները պատերազմէն շատ առաջ զոյուրիւն ունէին, և պատերազմը միայն առնուղակի պատճառ մ'եղաւ անոնց: Այդ անկարգութիւնը ոչ այնչափ զործոց բացառիկ վիճակէ մը կը ծագին, որոյ սաստկութիւնը կրնայ մեղմանալ քանի որ վերջին փոթորիկն արդիւններն անհետանան, որչափ թուրքական վարչութեան բնութեանն յարակից եղող պատճառներէ, երբ այդ վարչութիւնն ինքն իրեն թողուած է:

«Այդ վարչութիւնը մինչև անգամ զօշաւքաղութեամբ ապականեալ չեղած տեղերն անբուժելի կերպիւ անհոգ և անկարող է, և ասոր հետեւեան են Հայաստանի, Քիւրդստանի և Սիրիոյ մէջ տիրած անիշխանութիւնն ու հարստահարութիւնը, ինչպէս նաև այն անգղապետութիւնը, որ Անատոլիոյ արևմտեան գաւառներն իրենց աւերման ու անկման արդի գրեթէ անյոյս վիճակին բերած է: Մեր երկուսն թուով հրատարակած մէկ յօդուած ծին մէջ Արևելեան գաւառաց վիճակն համառօտիւ յիշեցնելը՝ թրօթթըր հազարապետի տեղեկագրաց յիշելով, որ անցեալ տարւոյն վերջը Կարնոյ հիւպատոս անուանեալ էր, և ձմեռն ու գարնանը Տիգրանակերտի շրջակայները քննութեան պտոյտ մ'ընելով անցուց: Այդ գաւառաց մէջ զործոց վիճակին վրա թրօթթըր հազարապետին ըրած նկարագրութիւնը պարզապէս ողբալի է: Աւազակութիւնն ու հարստահարութիւնը ընդհանուր են, և ոչ մէկ կողմ կենաց ապահովութիւն կայ: Դժբան իշխանութիւնն անկարող են բարեկարգութիւնը վերահաստատելու կամ պահպանելու, և երկրին բնակչաց կողմանէ անթիւ աղերսագրեր տեղացին թրօթթըր հազարապետին վրա, աղերսագրեր, որոց մէկ մասն Ներսպական տէրութեանց ուղղեալ էին, մէկ մասն ալ ուղղակի Անգղիոյ թագուհւոյն, և այդ աղերսագրաց շատ խիստ յուզիչ խօսքեր կը պարունակէին, որք յայտնապէս ժողովրդին սրտէն կը բոխէին: Տարակոյս չը կայ որ յիշեալ գաւառաց մէջ, ուր բարեկարգութեան և կառավարութեան ամեն երեւոյթ անհետացած է, առաջին զործը պէտք է լինի ըստ բաւականին կենաց ապահովութիւն գոյացնել: Քաղաքային բարենորոգման կամ լուսաւոր վարչութեան խօսք չը կրնար լինիլ հոն, ուր քաղաքային կառավարութեան նախնական տարերքն իսկ գոյութիւն ունենալէ դադարած են: Սակայն, Լորտ Սալիսպըրի և մեր Կ. Պօլսոյ դեսպանին կողմանէ քանիցս Դրան եղած դիտողութեանց և յանդիմանութեանց հակառակ, և թրօթթըր հազարապետին տաւրոյս սկիզբն այս նկատմամբ առաջին անգամ ուշադրութիւն հրաւիրելն ի վեր ալ կը թուի թէ իրական բան մ'եղած չէ:

«Բարենորոգմանց յայտարարութեան արդարացնելու համար թուրքիոյ վերջին դժբաղդութեանց

վրայ հիմնեալ առարկութիւնը քիչ մը կշռուենալէ զուրկ չէ, թէև անցած ամեն մէկ շաբաթ՝ ոչ միայն այդ առարկութեան զօրութիւնը կը նուազեցնէ, այլ և անկեղծ առարկութիւն մը լինելուն նկատմամբ ծանր կասկածներ կուտայ: Մինչև անգամ եթէ Անգղիա մասնաւոր կերպիւ պարտականութիւն յանձն առած չը լինէր ամեն ջանք ի զործ դնել Փոքր-Ասիոյ համար բարեւոք վարչութիւն մ'ապահովելու, հասարակաց կարծիքն անգամ մ'արթնացած և խնդրոյն կարեւորութիւնն ճանաչած լինելով, զայն մէկ կողմ թողլու խիստ պիտի դժկամակի: Այս ոչ ևս այնպիսի խնդիր մ'է, որ միայն Անգղիական կառավարութեան պատուոյն ու անկեղծութեանը հետ վերաբերութիւն ունի: Քանի մը շաբաթ առաջ Սըր Չարլզ Տիլքի առաջարկութեան վրա տեղի ունեցած վիճաբանութիւնը կը ցուցնէր թէ երկու կուսակցութիւնը ևս Փոքր-Ասիոյ վիճակին բարեւոքման համար Պէրլինի դաշնագրին տրամադրութեանց վաղ ընդ փոթ զործարդութեան հաւասարապէս կարեւորութիւն կուտան, և տարակոյս չը վերցնելու իրողութիւն մ'է, որ խորհրդարանին սոյն կամը բոլոր Անգղիական երկրին մէջ հզօր նեցուկ կը գտնէ հասարակային կարծիքէն:

«Երապէս, ընդհանուր կարծիքն այս է որ ժամանակն եկած է թուրքական բարենորոգմանց խնդիրը լրջաբար ձեռք առնելու՝ եթէ երբէք բարենորոգում պիտի լինի, և կառավարութիւնը թագուհւոյն բանախօսութեան վերադրեալ հատուածին մէջ պատշաճ բացատրութիւն մը տուած է այդ համոզման: Բընականաբար, քանի որ Պէրլինի դաշնագրին ճշգրտ յօդուածը զործնականապէս ապարդիւն մնայ, Անգղիական կառավարութիւնն ընդհանուր պարտականութեանն իւր վրա ինկած բաժինը կատարած չը կրնար համարվիլ՝ որչափ փափաք ալ ցուցած լինի կատարելու: Բայց սխալ կը լինի կարծել թէ մեր կողմէն բան մը չէ եղած, քանի որ ինչպէս ամեն ոք կը խոստովանի՝ տակաւին շատ բան կը մնայ ընելու: Փոքր-Ասիոյ մէջ հիւպատոսական պաշտօնը վերականգնեալ և լաւ յատկութիւններ ունեցող անձանց յանձնուեցաւ, որք հին տեսակ Արևելեան հիւպատոսներէն խիստ տարբեր են: Կարնոյ հիւպատոս թրօթթըր հազարապետն և Փոքր-Ասիոյ ընդհանուր հիւպատոս Ուիլյամ Գնդապետն, որ Ներսպական կը նստի, ինչպէս նաև անոր ստորակարգեալները կարողութեան և փորձառութեան տէր մարդիկ են: Եթէ թուրք կառավարութեան նախնաձեռնութեանը պատճառաւ այդ հիւպատոսաց յանձնուած իշխանութիւնը սահմանափակ են, և հետեւեալ չեն կրնար անոնց կարողութիւն տալ որ իրենք կատարեն իրենց հարկաւոր դատած բարենորոգումներն, այսու ամենայնիւ իրենց արուած իշխանութիւնը նպատակի և միջոցի կողմանէ ուրիշ երկիրներու սովորական հիւպատոսներուն իշխանութեանն խիստ տարբեր է: Անոնք իրենց գտնուած տեղերն ամեն բան պիտի քննեն, իրենց տեսածն Անգղիոյ արտաքին զործոց նախարարութեան պիտի տեղեկագրեն, և թէ պէտք հրամայելու և վարելու համար յայտնի իշխանութիւն չունին, այսու ամենայնիւ կարող պիտի լինին թուրք պաշտօնատարաց վրա ազդեցութիւն բանեցնել, և Դուռն իսկ խոստովանութիւն պիտի համարի ոչ ևս ընդդիմանալ այդ ազդեցութեան:

«Երազդաբար, Փոքր-Ասիոյ մէջ հիւպատոսական պաշտօնին վերականգնութեան արդիւնքը մինչև ցարդ ուրիշ բան չէ եղած, բայց եթէ Հայաստանի և արևելեան Անատոլիոյ մէջ իրաց այնպիսի վիճակ մ'երևան հարող, զոր Սըր Հէնրի Լէյքըրտ չէ վարանած ընդհանուր անիշխանութիւն և յուսի վարչութիւն անուանելու: Բայց անգղիական կառավարութիւնը բաւական չէ համարած թրօթթըր հազարապետին տեղեկագրեր ընդունելու:

Ինչ և անոնց վրա պէտք եղած ձեռնարկը չը ներ: Կրկին և կրկին անգամ խիստ լեզուով Դրան ուշադրութիւնը հրաւիրուեցաւ իւր պարտականութիւնները զործարդելու հարկին վրա, և յունիս ամսոյ մէջ Սըր Հէնրի Լէյքըրտ ազդու յանդիմանագիր մ'ուղղեց Դարաթէս տորի փաշային, յորում կը յիշեցնէր թէ Դուռնը փաստաւոր ընթացքի մը կը հետեւի թոյլ տալով որ արդի անիշխանական վիճակը շարունակի: Հաւանականաբար այս ազդարարութիւնը կրկին և կրկին պիտի յեղեղի և աւելի կը տուրկ լեզուով պիտի բացատրի մինչև որ թուրք պաշտօնատարաց յամառութիւնն ու մեղմեխանքն ի վերջոյ նուաճին: Բայց վաղ կամ անագան Դուռնը պիտի պարտաւորի հասնալ որ եթէ Անգղիոյ և Ներսպիոյ պաշտպանութիւնը կուզէ պահել, պէտք է անմիջապէս ձեռք գրնէ բարենորոգմանց և ոչ թէ անտրոշ ժամանակի մը համար խոստումներ տայ: Ներսպա չը պիտի թոյլ տայ որ Հայկական խնդիր մը պուղարական խնդրոյն տեղն անցնի և Ներսպիոյ խաղաղութեանն ու անդորութեանը մշտնջենաւոր սպառնալիք մը լինի. և ի վեր քան զամենայն, Անգղիա չը կրնար թոյլ տալ որ անիշխանութեան վիճակ մը, որոյ զոյուրիւնն ապացուցած ու ճանչուած է, անորոշ կերպիւ երկարաձգի:

«Եթէ թրօթթըր հազարապետին տեղեկագրերն ուրիշ արդիւնք չունեցան, զէթ անոնց միջոցաւ կարող եղանք հասնալ թէ Փոքր-Ասիոյ խռովեալ գաւառաց անմիջական պիտոյքն ինչ են: Ուիլյամ Գնդապետն ընդհանուր հիւպատոս անուանած ժամանակ, այսինքն ապրիլ ամսոյն մէջ, լորտ Սալիսպըրի հրահանգ տուաւ անոր թէ ամեն նիւթական յառաջադիմութեան համար առաջին պէտք եղածն աւազակութիւնը զսպելու պաշտօնով հասարակային ազդու զօրութեան մը կազմութիւնն է: Միւս կողմէն լորտ Սալիսպըրի ընդհանուր հիւպատոսին պարտականութիւնները բացատրեց՝ յայտնելով որ այլ և այլ դատա ժողովրդեան վիճակին պիտի տեղեկանայ, խորհրդատուութեամբ պիտի օգնէ թուրքական իշխանութեանց, պիտի ցուցնէ անոնց այն միջոցներն՝ որովք կարելի է խնայողութիւն ընել և աւելի ազդուութիւն տալ վարչութեան, և զործարդել իշխանութեանց և դատարանաց կողմանէ եղած ամեն կեղեքումներն ու զօշաբաղդութիւններն, որոց վրա տեղեկութիւն առնու, պիտի նշանակէ և յանդիմանութիւններ պիտի ուղղէ տեղական իշխանութեանց: Սալիս ամսոյ մէջ ալ Սըր Հ. Լէյքըրտ նմանօրինակ հրահանգներ տուաւ թրօթթըր հազարապետին՝ անոր զործողութեան ուղղութիւնը նշանակելու համար. ուրովհետեւ յիշեալ հազարապետը Կարնոյ և շրջակայ գաւառաց վիճակին տեղեկանալու պաշտօնով Դրան կողմանէ անուանեալ յատուկ յանձնախմբի մը զործակցելու պաշտօնն ունէր: Այդ յանձնախմբին անուանումը Փոքր-Ասիոյ արևելեան գաւառաց վիճակը բարեւոքելու համար մինչև ցարդ Դրան ձեռք առած միակ միջոցը լինի կը թուի. այսու ամենայնիւ՝ ամիս մ'ետքը Սըր Հ. Լէյքըրտի առ Դուռն ուղղած յանդիմանագիրը կը ցուցնէ թէ այդ յանձնախմբին ալ խիստ չնչին արդիւնք ունեցած է: Սակայն թրօթթըր հազարապետին հրահանգ տրուած էր որ իւր ազդեցութիւնն ի զործ դնէ Սուլթանին ամեն կարգէ ամեն ցեղէ հպատակներուն համար հաւասար արդարութիւն ձեռք բերելու, տուրքերն յարմար եղանակաւ մը բաշխել տալու, և բնակչաց և ուղեւորաց համար երկիրն ապահով վիճակի մէջ դնելու պաշտօնով ոստիկանութիւն մը կազմել տալու նպատակաւ: Որպէս զի թրօթթըր հազարապետին ընել արժան դատելիք զխոզութիւններն իրենց օրինաւոր ազդեցութիւնը չը կորսնցունեն, լորտ Սալիսպըրի ինքն հրահանգ տուաւ յիշեալ հազարապետին յայտնելով, որ թէև իւր զործարդ

իշխանութիւնը տեսականապէս սահմանափակ կրնայ լինիլ, այսու ամենայնիւ Սուլթանը՝ մին համայն Ներսպիոյ՝ և միւսն Անգղիոյ՝ կրնու հանդիսաւոր խոստումներ տալով ինքզինք կապած է՝ ոչ միայն նոր և բարեւոք օրէնքներ հրատարակելու, այլ նաև բարենորոգումներ զործարդելու իւր Նախական գաւառաց վարչութեան մէջ, և թէ՛ հետեւեալը՝ այդ խոստմանց ողբոյն հակառակ եղող ամեն արարքներ յանդիմանութեանց առաւ նիւթ կրնան խոստակարարել՝ նախ հիւպատոսին, և ապա՝ ի հարկին դեսպանին կողմանէ: Այս է ահա մեր արդի դիմքը:

«Փոքր-Ասիոյ, և մասնաւորապէս այն գաւառաց որք անմիջական ուշադրութիւն կը պահանջեն, արդի վիճակը ճշգրտելը. նախ նախկին կազմութեան և կենաց ու ընչից ապահովութեան համար հարկ եղած միջոցները նշանակելիք. Դրան պահանջելիք որ այդ միջոցներն անյապաղ ձեռք առնու. ձեռնհաս զործակատարներ անուանելիք որ այդ միջոցներուն զործարդութեանը մէջ պէտք եղած խորհրդատուութիւնն ընեն, և խոստացանք ազդու օժանդակութիւն ընել իրենց այն ամեն խորհրդոց մէջ, զորս իրենք տալ հարկաւոր դատեն Օսմանեան իշխանութեանց: Խնդրոյն Անգղիոյ վերաբերեալ մասին մէջ այսչափ խիստ հեռի է բնաւ բան մ'ըրած չը լինել, թէև՝ Դրան վերաբերեալ մասին մէջ՝ ցուցել է որ տակաւին այսպէս չը կրնար ըստել: Բայց ժամանակն եկած է բացորոշապէս ծանուցանելու թուրքիոյ թէ ոչ ևս կրնան իւր պարտականութիւնները զանց առնուլ, Փոքր-Ասիոյ վիճակն Արևելեան խնդրոյն յարակից եղող զլխաւոր դժուարութիւնն է պիտի, և առանց ազդու և կտրուկ ընթացիլ՝ չը կրնար լուծուիլ գտնել: Այս նկատմամբ ընելիք բոլոր ջանքերն Անգղիոյ ամեն կուսակցութեանց կողմանէ համակրական աջակցութիւն պիտի գտնեն:»

(Մատիս)

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10 ՅԱՅՈՒՆ, 17 սեպտեմբերի: Միմայից հաղորդում են, որ Բօքէրտո հրաման է հրատարակել, որ յայտնում է թէ անգլիական զորքերը մտնելու են Կարնու և նախագլուշացում է խաղաղ բնակիչներին, որոնք ապատմութեան մէջ մասնակից եղած չեն, որ նրանք հօգան իրանց ապահովութեան մասին: Իսկ այն զինուորական մարդիկներ չէա կը վարվեն որպէս թշնամիներ չէա:

Կ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Միջազգային յանձնաժողովը վերջացրեց իր աշխատանքը Բօլզարիայի և Բուլինիայի մէջ սահմանները որոշելու մասին: Վճիռը ընդունված է հինգ ձայներով Ռուսաստանի դէմ: Փրանսիական կոմիսարը չը մասնակցեց ձայնատուութեանը: Ասում են որ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի չը ճանաչել ընդունված վճիռը սահմանների որոշելու մասին, որովհետեւ վճիռը միաձայն չէր կայացել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: «Права. Вѣстн» հաղորդում է, որ Փաղաւոր Կայսրը հրամայել է կառուցանել Ղարսի մէջ բերդի վերակառուութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Типографія А. А. Михельсона

Այն
տեղում
—Արտ
սիրտ
—Յայտ
սիրտ

436

«Մ
Հաս
սիրաց
ներկա
պել,
ռուսա
ծունե
ասու
մինչդ
12,00
տեան

Նա էլ
 տեսաբար
 որքան չո
 Գործ
 Երբի հաս
 չունենի:
 Շատախ
 անփական
 Երբայան Ե
 րան տուն
 Երբի է ն
 Երբի հաս
 րթ անն
 անգամ ծ
 լըսկենն,
 առաժակ
 են, հեռ
 Երեսին
 տեսած իս
 ողնչի ան
 Պաշտոն
 Կեաքների
 Ժշւնը:
 «Ի՛նչ յ
 րած» վի
 յայց մ
 րտնի, Բն
 ողովը:
 Ժողովը
 նխտեղ—
 Կեղեցեց
 լինի:
 Կամաւա
 այց աւել
 Սմինքն
 Իրկսիւթի